

ծը եկածէն աւելի արդիւնաւոր է. գոնեա աշաւ-
կերտուհիք աւելի քիչ հայհոյանք (չափազան-
ցութիւն չամարիք այս խօսքը) կլանն.

Ասացինք թէ աղան զինքը նաև ակած է եկե-
ղեցւոյ մէջ սպասաւոր և չսխալվեցանք, վասն զի
թէւ Ազգիրմանի եկեղեցին ինչպէս որ տեսանք,
ունի քահանաներ պէտք եղածէն աւելի. ունի
նաև երեցինան ըստ օրինի, բայց գործ հար-
կադրուած են կոյրվուրայն հնազանդիլ աղային
հաճոյիցը ըստ որում ժառանգական հոգաբար-
ձութիւն կընէ եկեղեցւոյն վերայ ինչպէս նաև
դպրոցին՝ չնայելով որ ըստ զօրութեան կայսերա-
հաստատ օրինաց “Սրբազնագործ պաշտօնեայք
ենթարկին անընդմիջական իշխանութեան վիճա-
կաւոր Առաջնորդաց. իսկ ստորին եկեղեցականք
Աւագերիցուն կամ զինաւոր քահանային,, ևս և
ըստ զօրութեան Ազգակինամ և Վեհ. Կաթողի-
կոսի ամենայն Հայոց Կոնդապին, որ հրատարակ-
ւած այս 1872 արքուան Արքարատ ամսաթերթի
Յունլար ամսոյն մէջ թէ “Մի տայցեն զիրա-
ւունս քահանայացուաց կրեց զուրար ի յուսն
առանց աստիճանի սարկաւագութեան ընդդէմ
եկեղեցական կանոնաց,, Օրիորդաց դպրոցին ու-
սուցիչը, որ Սևաստափոլի մեշշանին է տակաւին
ոչ միայն ուրար հձգէ ուսոր հապա աղանին թե-
լապութեամիր քանի մի անգամ հակառակուած
է քահանայից հետ, և թէպէտ Քիշներ Հոդ. Կա-
ռավարութիւնը հրամանագրով առ երեցիու-
խանն պատուիրած է զինքը արձակել ի սպասա-
ւորութենէ. բայց վարժապետը անիցի կիտուի
այդ հոգեոր հրամանը կատարելու. ըստ որում
մէր աղային նման աշխարհական ու աշխարհատես
պահապան ու պաշտովան ունի ի նեղութեան . . .

Ես թէպէտ չեմ ամսորժեր մարզու մը անձնա-
կան յատկութիւններն ու պակասութիւնները
քննելով զիր անցնել. ըստ որում ամենքնիս ալ,
ի թիւս որոց և ես ձեր խանարհ ծառան շատ և
շատ պակասութեանց տէր ենք, բայց ես կամեցայ
այս քաղաքին հոգաբարձուին ու վարժապետին
չափէ դուրս անիրաւութիւնները դուրս ցատկեց-
նելով՝ ճիշդ գաղափար մի տալ մէր այժման
դպրոցաց քանի մի հոգաբարձուաց ու վարժապե-
տաց անձնաւորութեանը վերայ այս վիճակին մէջ,
որինեաց այսպիսի լուսաւորեալ գորու մէջ կը
հաւատացուի տակաւին մատաղերամ մանկանց
ուսումնական ու բարցական կրթութիւննը հա-
սարակութեան նույիրած զրամաները, դպրոցաց կու-
ռավարութիւնը ու կուսասուի յապացային յա-
ռաջադիմութիւնն. Օրիորդաց դպրոցը վարժուչի
մըն ալ ունի որ 150 մանեմթ կընդունի, նշյալէս
իբրև ողորմութիւն. վասն զի աշակերտուչեաց
Հայերէն բատեր սորվեցնելով կծանայ Հայերէն
ինքնին նշյալէս սովորել. Գովելի ջանք, բայց գորք
ալ կարող էք խոստովանուիլ, որ յոյժ անտեղի
է դպրոցին մէջ.

Վերը ասացինք թէ կրօնուասոյց չկայ Ազգիր-
մանի զպրոցին մէջ, իբրև վերջարան Ազգիրմանի
դպրոցին դրութեանը յաւելցնենք նաև այն՝ որ
եղացեղողութեան դաս նայնպէս չկայ.

Ինձ այնպէս կթուի որ Վեհ. Կաթողիկոսը ծը-
խական զպրոցաց կանոնագրութեան 11 յօրուա-
ծին մէջ այն մաքով կրարեհածի հրաման տալ-
որ մոււաք դպրոցաց համարուին նաև տոփոսիք ե-
կեղեցական գրամագիտոց կամ մասն ինչ ի դրա-
մագիտոց անտի ըստ կարգադրութեան Թեմսկայ
Առաջնորդին և ըստ կանխագյուն գիտութեան Վե-
հափառ. Կաթողիկոսին ամենայն Հայոց, որ Դպր-
ոցին փոխարձ օժանդակութիւն մի լինի եկե-
ղեցւոյն բարեկիրթ քաջաճայն երգիշներ պատրաս-
տելով, որպէս զի մէր ազգի Դպրոցաց Հոգեոր
ազգային նշանակութիւնը պահպանուի, որով մի-
այն կարող են իւրեանց նպատակին հասանել.
բայց հցաւիմ որ այդ բանը ո՞չ միայն Ազգիրմա-
նի մէջ. հապա նոյն իսկ Թէոդոսիա և ուրիշ քա-
յաբներ ամենեւին չկատարուիր. բայց ի Օտեսիայի
Դպրոցէն, բայց և այնտեղ յցի թերի:

(Նույնականութեան)

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

(Նույնականութեան)

№ 1.

Ուրիշ տեղ մենք ասացինք. որ շատ մոտեր, ու-
րոնք հայերէն ել զեղեցիկ կուրս զային՝ պէտք
եր հարազատութեամբ թարգմանել, որովհետեւ
հեղինակի մոտածողութեան և մրոք յայտնելու՝
ձեւերն ել ինսամով մշակված և զեղեցիկ են
այսպէս ։ ԵՄԵԾՏԵ տեսի, ա վրօնո շկսին,
յօդուածի վերնագրի տեղ Պ. Տէր - Լ. Առնեգեան-
ցը զիել է ունձ հոտ մի խաղարի,, որ բոլորովին
ուրիշ միաբ է և բնազրից շատ տարրեր ու սոսոր
բայց հարազատ թարգմանութիւն կարող եր, ո-
րինակի համար, այսպէս լինել :

Մէսանն նեղուածն է, մէսանն եւ յանդաւալի է:

Եղբայրը քրոջը ասումէ, “Հը կազմո բզզա-
նիս,, Քցըր ել եղբօրը պատասխանումէ. Դէք
զուն ել իմ տիկինի շկապէս,, Երեխաները մէկ
մէկուց հեռացան, բայց շուտով նրանք երկում
ել բզզեցան:

Երեխաները նշյան - բէրեցան:

№ 2.

Պահաւորակ (Լևան?). բայց աւելի լաւ եր
դիւան ասել: — Պահարան (Կոմոձ?) մէր պապիրը

այդ տեսակ կարասիք չեն ունեցել, որ անոն էլ տային ուրեմն մենք ուրիշց առնելով զրան (նոյնպէս և շատ ու շատ բաների) ձեզ՝ անոն էլ պիտի առնենք: — Խեցի (գործում!) սա նշանակում որ և իցե կաւից շինած ու թրծած բան, իսկ ծաղկաման չէ նշանակում, ուրեմն գործուք՝ ըժաղկամանի մորով առնելով՝ բաւական էր միայն ծաղկաման ասել: — Պղինձ (կուլը?). ամէն տեղ հայերը ընդհանրապէս զազան են ասում, և գործածելու սա յարմար է, քան սպլինձը... որ նիւթի անունն է: — Սամօարք՝ ը հիշուած ասել խապատ աւելորդ է, որովհետեւ ո՞չ թէ մենք միայն այլ ուրիշ ազգերն էլ սամավար են ասում: — Այս տեղ կարելի է թարգմանել այս հանելուկը. Բա ներ անունն է: Կամոարք՝ ը հիշուած ասել խապատ աւելորդ է, որովհետեւ ո՞չ թէ մենք միայն այլ ուրիշ ազգերն էլ սամավար են ասում: — Այս տեղ կարելի է թարգմանել այս հանելուկը. Յե ներ անունն է: Սամօարք ծակ, մէջ տեղը կրակ ու ջուր: (Մեկն, Սամավար.)

Հ 3.

ԴՐԱԿԱՆ (?)

Հ 4.

Այս Հ—ում կրթութիւնների վերնագիրը Հայերինում է «Հագնելիք», բայց սա անյարմար է երևում. որովհետեւ ներըև— Սպիտակեղենների շարքում «սփոսց, սաւան, թաշկինակ և երևս սրբիչ», հագնելիք չեն: Այլ աւելի լաւ էր Ռուսների վերնագիրը— Պլատե, օբյու, և ճելլե— Ճշգութեամբ թարգմանել. Ըսր, ոտնաման և սպիտակեղեն: Խնջո՞ւ պէտք է ոլոյե և օբյու հանդիրձեղեն ու մաշկեղեն ասել, երբ շոր ու ոտնաման խապատ ընդհանրացած են. մանաւանդ որ՝ մաշկեղեն բառորդ զրաբառիցն է վերցրած և նշանակում ե մորթուց կամ կաշուց շինած բան, զօրօրինակ Մաշկեղեն գօտի, ձեռնոց, զգեստ, զիսարկ, ևլու:

Մեղանում առ հասարակ փաղաքական և նուազական մասնիկները շատ քիչ են գործածվում. զրանց բոլոր զործածութիւնը էն բոլէին ընթերցողի աշքին է կազուում, և մի խօսքով, շատ խորթ է ասել և լսել թէ մեծերին և թէ փոքրերին: Երբ լեզուն այդ յատկութիւնը չունի՞ ի՞նչ հարկաւոր է: Ե ի՞նչպէս կարելի է կարկատաներ կացնել նրան: Զօրօրինակ՝ այս Խում «փոքր մուկիկը», «իի», խապատ աւելորդ է: Հայը չէ ասում փոքր մուկիկ, մեծ մուկիկ, այլ փոքր (կամ փոքրիկ, պատիկ պիհծիկօ) մուկի, մեծ մուկ. այս մասնիկներով գրուածքի լեզուն երեխայական չի զառնալ, այդ յատկութիւնը գարձուածներիցն է կախված: Այս տեսակ իշրկուուն— գործութեամբ կան Մայրենի լեզուի միւս Հ—ներումն էլ:

Մի օր մէծ մուկիկը Մենք կարծում ենք, որ աւելի յարմար է «մէկ բառը շատ զործածել, քան, «մի»,, որովհետեւ նա էլ հա-

յերէն է և համարեան բոլոր հայերը այդպէս են ասում: մանաւանդ որ՝ «մի», բացասական խօսքերում էլ միշտ բանացրվումէ: Մենք չենք ասում խսպառ չըգործածել՝ «մի», կամ թէ Մայրենի Լեզուն «մէկ», եր չունի. միայն ասում ենք, որ լաւ է «մէկ», աւելի շատ զործածել, իսկ «մի», աւելի քիչ:

Մկրանական դասազբար լեզուն, որքան կարելի է, պէտք է խօսիցն լինի. Ճանք. դանդաղ ու յիշ գարձուածները և ոճերը ամենեին չեն մըտնում երեխաների մոաց մէջ, նրանց զգացմունքները չեն շարժում: Այս կողմից Մայրենի Լեզուն պակասութիւններ ունի, զօրօրինակ. այս Հ—ում «Մեծ քոյրը նորան այդ թանձր ծովից հանել կամեցաւ, բայց ու բաւական ծանրը ոճ է, աւելի գեղեցիկ լինէր կամեցաւ,, բայրը առաջ դնելու, զիցուկ թէ, այօպէս ասել: Մեծ քոյրը ուզեց, որ նրան էլ թանձր ծովից հանի, բայց

Հ 5.

Ծօրչա գժուար թէ կարելի լինի առըք ասել: սարբը շատ բաների համար ասվումէ, զօրօրինակ հեղեցու, տան, հանդիսի, զիսի, ևլու, սարբ: Թիկնափոկ (հոյութ) լաւ է «վասմութ», ասել, Կապեր (?) Փորբաշ (?) թամր (թամք) որովհետև լունդհանրացած է):

Կարելի էր թարգմանել այս հանելուկը. Ջա կոյն դա կոնց, ա ու սերդին ցանք առաջ մէկ մեխ (Մեկնութիւն. Մկրատու)

Պէտք է թարգմանուէր Լոշած և Ծօխ.

Զի՞ւ և Աքը:

Զի՞ն արօրին ասել է. «Քեզը եւ բեղը եւ քեզ քաշտալուց,, Արօրը պատասխան է տուել ձիին. Անս էլ քեզ կերակրելուց եւ բեղը եւ...»

Պառաւն ու հաւը յօդուածը բաւական անշամ ոճով է զրած: Լինում է, ունենում է, ածելիս է լինում՝ զանդաղ ձեւեր են ու քիչ զործածական: Այս կարելի էր ուրիշ կերպ ասել, զիցուկ թէ այսպէս: Պառաւը մէկ հաւ ունէր օրը մէկ ձու էր ածում («սորա համար,, ասելը աւելորդ է, ի հարկէ ուրիշի համար հօ չէր ածել): Նա ինքն իրան մոածեց: « արի! հաւիս շատ կուտ ու տաշնեմ, բալքամ օրը երկուսը երկը ածի: Յետոյ լերկալաւ նրան շատ կուտ տվեց: Հաւը էլքան չաղացաւ, որ ձուից կարվեց: Պառաւը երկուսը երկը ստանալու տեղ՝ էն մէկիցն էլ զըրկուեցաւ: Խնջո՞ւ:

Մկրանական նախարասութիւնները որքան հրնար է պիտի համառոտ լինին և ոճը կոկ. ամփոփ. երկար ու ճապաղաղ ձեւերը խիստ ձանձրալի

են երեխաներին (թէկ շափահամների համար էլ այդպէս է):

Այս Հայոց ուսուլը շորտով անեն+ (?)։

№ 6.

Վերնադրում Ծյա ուղիղ թարգմանած է անաւեր... բայց յետոյ դառնումն անաւատորմիդ, — Փօտե, որ սիսալ է: — Այստեղ լաւ կլինէր մի քանի նաւերի և կառքերի անուններ, որոնք հայրենում չըկան, բայց ժողովուրդի բերանում խավաւմ է, ուղղակի օտար ազդիրից վերցնել և գնել։

Բայց Թողած հանելուկ. Դва եռած ընթաց են բերեցի երեխաներին. բայց այստեղ ևս “իկ”, մասնիկը անհամացնումն բանը, զօրօրինակ. Աղուէր չի ասիլ թէ “Նոյին, հովիւ, զառիկ տո՛ւր, զառիկ տանեմ պառիկ տամ, պառիկ ինձ իմ պողիկ տայ, կապեմ” այլ կասէ: Հովիւ հովիւ, մէկ գառ տուր, զառը տանեմ պառաին տամ, պառաւն ինձ իմ պոզ տայ, կապեմ “իկ, մասնիկը կոչական հողովում միայն գեղեցիկ կ'երևայ: — “Ըղուն էր անում, ծանօթութեան մէջ մէկնած է յօրեան մաղել և մաքրել, նախ՝ աղուն, մենակ ցորենից չի լինում, այլ և միւս արմտիքներից կամ հացի հատիկներից: Երկորդ՝ “աղունը, կամ յօրեանը, չին “մաղում, այլ “վախալում, (խարբալել) են, և երրորդ՝ “աղուն, նշանակումէ ամենայն տեսակ հացի համիկը, որ ամբարից կամ հորից հանում են, բայց օդի մէջ չորացնում (եթէ նամ է լինում) և խախալում ու մաքրում ջաղաց տաներու համար, բայց ամենայն ցորեան կամ արմտիք, որ խախալում ու մաքրում են, աղուն չի ասվիլ. աղունը միայն աղալու համար պատրաստելիս արմտիքն է:

Այս տեղ թարգմանումնք (մի քանի տեղեր ազատորէն) Տերեօն մատուց յօդուածը, որ բայց էր թողած:

Մ-մ-մ Պալուս:

Պաշտումը մէկ ձիի զլուխ կար վերընկած. ծրվծվան — մուկը եկաւ նրան մօտ, ասեց. “Պալատ—պալատ, ո՞վ է քեզնում կենում: Ուսով պատասխան չառեց: Լաւ, մուկը ձիին զրւուր մօտ, էն տեղ իրան համար կենում էր:

Եկաւ կոկուն գրատը. “Պալատ—պալատ, էր ո՞վ է քեզնում կենուղը, — Ես ծրվծվան — մուկն եմ, բայց զո՞ւն ով եմ: — Ես էլ կոկուն —

զորտն եմ, — Արի միասին կենակը: — Գորտը վերև թռաւ պալատը, և սկսեցին բնքն ու մուկը երկու հօգով կենակ:

Եկաւ նապաստակը. “Պալատ—պալատ, ո՞վ է քեզնում կենում, — Ես ծրվծվան — մուկը մէկ էլ կոկուն — գորտը, գո՞ւն ով եմ, մէկ էլ սարերում վազվազը, ինքոր ո՞վ եմ, — Եւս էլ ամէն — տեղ — իցկուղը, — Դէ դուն էլ մեղ մօտ մտիր: Ճիմի էլ չորս հօգով կենակ:

Եկաւ աղուէս եղբայրը. “Պալատ—պալատ, էր տեղ ո՞վ է կենում, — ծրվծվան — մուկը, կոկուն — գորտը, սարերում — վազվազը, մէկ էլ ամէն — տեղ — իցկուղը. ո՞վ ես ինքդ, — Ես էլ իմ — բանը — իմ — ձեռքով — տեսնողն եմ, — Դէ կամ մօտ մտիր: Ճիմի էլ չորս հօգով կենակում:

Եկաւ պայը. “Պալատ—պալատ, ո՞վ է քեզնում կենում, — ծրվծվան — մուկը, կոկուն — գորտը, սարերում — վազվազը, մէկ էլ ամէն — տեղ — իցկուղը. ո՞վ ես ինքդ, — Ես էլ իմ — բանը — իմ — ձեռքով — տեսնողն եմ, — Դէ կամ մօտ մտիր: Կառան հինդ հոգի: Լաւ — սիրուն էլ արի մեղ մօտ: Կառան հինդ հոգի:

Վերջը վերջը՝ յորէս միթմիթմալով զալիս է պարոն արջը. “Պալատ—պալատ, էր ո՞վ է քեզնում կենուղը, — ծրվծվան — մուկը, կոկուն — գորտը, սարերում — վազվազը, ամէն — տեղ — իցկուղը, մէկ էլ իմ — բանը — իմ — ձեռքով — տեսնողը. բայց զո՞ւն ով եմ, — Ես էլ ամէնքիդ — ջարդողն եմ, — Արջը ձիի վկիին վերայ նստեց, ձիուց ամէնքին, սպանուցց: Այս յօդուածը կարիքի էր 7-րդ Հ-ում գնել, ուր քիչ նիւթ կայ:

№ 7.

Վարաշ վայրենի զաղանների շարքն է զրած, բայց նա գաղան չէ. վարաշ խոզի արած է թէ վայրենի լինի այն և թէ լինտանի: Խոկ խոզի է զին “մարուն, են ասում շատ տեղերում:

Առածներում, Արջէ դուռն լւ իւրդին լւ հուսուն, սիսալ է. առածների առածով՝ արջի սիրած դուռն է, խոկ խոզի ուրուց աղուէնէ:

№ 8.

Թարգմանելու էր այս կտորը. Դրույն ու սուն ու ուղարձի:

Աւրիշներին մի’ գտտիր, քե՞զ մորիկ արաւ Խոզը եկաւ ձիին մօտ, ասաց. “ուտերդ էլ ծուռ — ծուռ են, մազդ էլ խիստ կոշտ է:

Նոյնպէս և այս հանելուկը. Ետք են եւս է էնի: (2ու և սպիտակուց ու գեղնուց)

№ 9.

Այս №—ում ընթերցանութեան նիւթը պահաս է. ուստի թարգմանում ենք բաց թողած Շաբակ և Յօդուածը:

ԾԵՐԸ Լ ԳԹԱԼ

Իլել է—չիլել մէկ ծեր ու մէկ պառաւ. Նրանք ունեին մէկ աման—լիզող կատու, մէկ գարդակ—հաշող շուն, մէկ զառ ու մէկ կով։ Գայլը իմացաւ, որ ծերը շատ անասուններ ունի, եկաւ նրան մօտ ու ասեց. “Ծեր, պառաւդ ինձ տուր, ծերի մեղքը եկաւ պառաւին տալու, նրան տեղ աման—լիզող կատուին տուաւ, Գայլը կատուին կերաւ, ու մէկ էլ օրը էլի եկաւ։ “Պառաւդ ինձ տուր, Ծերը ինայտմէր պառաւին. Նրան տեղ տուեց գարտակ—հաշող շանը։ Գայլը շանը կերաւ, պիծաւ, ու էլի իրանն է ասում։ “Պառաւդ ինձ տուր, Ծերին խիստ մեղքն էր զալիս պառաւը էնդուր նրան տեղը տուեց զառը, յետոյ էլ կովը. Ծերը էնտեղից քոչեց զնաց ուրիշ զիւղ, բայց պառաւին չըտուեց գայլին. Նրանք էնտեղ իրանց համար ապրում են, ու փառք են տալիս Խստուծուն։

№ 10.

Այս տեղ Խոպան բառը պէտք էր էլլուսութարգմանել, ոչ թէ վայրենի.

№ 11.

Մէկ հանելուկ Ուռսէրենից (Ուշինսկուց). Տունը ալլազակում է, տանտէրերը սուս են. մարդիքը եկան տանտէրերին րունոտեցին, տունը պատուհաններով վախաւ. (Տունը—գիտ. տանտէրերը—ծուկը. պատուհանները—ուռկանի ծակիրը) Անուում է, չի լինում մզանում առհասարակ, առասպելները, իլել է—չիլել առառով են սկսվում, քիչ անգամ “իլումէ չիլում” պահը, ըլում է—չըլում”։ բայց “կինում է չիլինում”, շատ խորթ է թէ ասելու թէ լսելու համար։

Այսնպէս խորթ և ծանր է պատուիրելիս է լինում, յևս զառնալիս է լինում, ևյու. աւելի գեղեցիկ և կենդանի է ասել՝ պատուիրում—էր, յետ էր գառնում, ևյու Պէտք է ասել, որ պայ յօդուածի լեզուն կոկ և միատեսակ չի, պյանչարթ, կախ ու զանազանիկիրդ. Այս տեղ մէկալ, բառը խիստ գեղեցիկ է, բայց ուլերի մասին ճագ, ասել անախորժ է։

Ամենայն տեսակ բառեր և ոճեր չե կարելի անխտիր մոցնել սկզբնական զասազքի մէջ, միայն այն պատճառով, որ նրանք լեզուի մէջ կան,

դասազիլքը լեզուի պառարանը կամ ոճարանը, չե, նորա նպատակը ուրիշ է, նորա իւրաքանչիւր բառը և ոճը պէտք է խնամով քննված և ընտրված լինեն։

№ 12.

Սունկերի շատ տեսակների անունները կան աշխարհաբառում, պէտք էր ժողովրդից իմանալ և զրել. Այնպէս և 13 № ի բառերի տեսակները։

№ 13.

Խենանա բաշեն Հատիկներ չե, պյան Հատարցոյսեր. Այօմ բառը չե թարգմանած, որ նըշանակում է , պյան պառազների Հետ շփոթած է։

“Գարին և ցորենը, յօդուածը հարազատ չե թարգմանած։

№ 14.

Պ. Ա. Պ. (իւր յօդուածում) անուշադրութիւնից տուաջ եկած սխալ, և համարում խընձորին տանձի, կեռասի զրելը փոխանակ ինձորինի, տանձնենի կեռասենի. բայց այս աւելի ուղիղ է, քան սխալ, որովհետեւ աշխարհաբառում ոչ մի տեղ, ինչպէս կարծումնք ծառերը չեն անուանում (անի), պյան սիր, վերջաւորութեամբ, որը համառօտութեան և հեշտ արտասանուելու համար աւելի յարմար է։ Կոյն իսկ դրաբառում (որտեղից վերցնում է Պ. Ա. Պ. անի,) խառնուած են անին, և սիր, և վերջինս յաճախ դրածածք, քան առաջնը, զօրօրինակ. Հացի, սօսի, կաղնի, բարտի, յունի, ուռի, ևայն; —ծառի համար և հաճարի, ասելը սխալէ, ուղիղն է։ “Հաճարիկին, և նորա պտուղը “Հաճարկ”, որպէս ասում են զանազան տեղերում (թէև գրաբառում հաճարի կամ հաճարուկ ծառի անուն կայ)։ Տղան—խիստ մանր ու թթու անտառի ինձոր (?)։

Պաղնի ծառը (թէև միայն կաղնի ասելով ամէն մարդ հասկանումէ կաղնի ծառը) և մարդի միերը “յօդուածը ծանր ու կախ ոճ ունի։

Այս №—ում բաց էր թաղած Կոլոսու յօդուածը. սա անշափ գորեկան է երեխաներին, ինչպէս տեսել ենք շատ անգամ Ուռսերէնը կարգալիս վասնորյ թարգմանումնք (մի քիչ աղատորէն) այժմ։

Պահանջ:

Իլել է չիլել մէկ ծեր ու պառաւ. Մէկ օր ծերը ասումէ պառաւին. Աև կնիկ, ինձ համար

գաթայ թիսիրու - Էնչից թիսեմ. աղիւր չկայ: - Անջի, զուն խիկի բան շնո իմասալ. վիր կալ ամբարը աւելիր քունջերը քերիր - կը հաւաքի, - Պատաւը Էնպէս էլ արաւ, աւելեց քերեց, երկու բուռ ալիւր շինեց, յետոյ արածանով հունցեց, գաթայ թիսեց, զրաւ լուսամուտաւմը, որ հովանայ:

Գաթան բեզրեց, Էնքան Էնտեղ վերընկած կացաւ. Էնդուր լուսամուտից ցած զրովեց զետնի վերայ, ճանապարհի ընկաւ զնաց. Գաթան էդպէս զորվերով զնաց, զնաց . . . առաջը դուրս եկաւ նապաստակը. «Դամայ - գաթայ, ես քեզ կուտեմ: - Զէ, մի' կեր ինձ, շիլ. լսիր, տես քեզ համար ի՞նչպէս երգ կերգեմ: Նապաստակը ականջները սրեց, գաթան սկսեց երգել.

Ես գաթան եմ գաթան
Ամբարից աւելած,
Քունչերից քերած,
Արածանով հունցած,
Թորոնում թիսած,

Լուսամուտաւմը դրած:
Ես ծերիցն եմ փախել,
Ես պառաւիցն եմ փախել,
Քեղնից էլ, նապաստակ,
Դժուար չէ փախել:

Գաթան պրծաւ ու սուռալի զրովեց. Նապաստակը հէնց էն էր, որ նրան տեսաւ: Գաթան էդպէս զնումէր անտարի նեղ ու ծուռ ճանապարհովը (Տրոսիկ), շաւիզ, կածան կամ կէծան - Լարաբարի բարբառով): առաջը դուրս եկաւ զայլը. «Դամայ - գաթայ, ես քեզ կուտեմ: - ինձ մի կեր, զայլ քեզ համար մէկ լաւ խաղ կասեմ: Ու սկսեց.

Ես գաթան եմ գաթան,
Ամբարից աւելած,
Քունչերից քերած,
Արածանով հունցած,
Թորոնում թիսած,

Լուսամուտաւմը դրած:
Ես ծերիցն եմ փախել,
Ես պառաւիցն եմ փախել,
Ես նապաստակիցն եմ փախել,
Քեղնից էլ, դայլ, եւս է փախել:

Հէնց էն էր, որ զայլը նորան տեսաւ. Նաշուտով առաջ զրովեց. Շնտարի մէջովը զնումէր գաթան, առաջը դուրս եկաւ արջը մեծ քուրքը հազած, ծառերը կոտրտելով, թուփերը զետնին կացցնելով. «Դամայ գաթայ, ես քեզ կուտեմ: - Ուց չէ, հէնց դուն էիր մնացել որ ինձ ուտես: Թէ խելք ունես, լսիր, տես քեզ համար ի՞նչպէս տաղ կասեմ: Գաթան սկսեց, արջն էլ ականջները քաշ զցած լսումէ:

Ես գաթան եմ գաթան,
Ամբարից աւելած,
Քունչերից քերած,
Արածանով հունցած,
Թորոնում թիսած,
Լուսամուտաւմը դրած:

Ես ծերիցն եմ փախել,
Ես պառաւիցն եմ փախել,
Ես նապաստակիցն եմ փախել,
Ես գալիցն եմ փախել,
Քեղնից, արչ, մի քէ դժուար է փախել,

Գաթան պրծաւ ու զրովեց. արջը նրան ետեւից հէնց մտիկ անկիս մնաց:

Գնումէր գաթան, պատահեցաւ աղուեր. «բարեկ քեզ, զաթայ. էդ ինչ սիրուն, կարմիր, Գաթան ուրախացաւ, որ իրան զովեցն, սկսեց իրան երգը. բայց աղուէսը համշում էր, համ էլ կամաց կամաց մօտենում նրան:

Ես գաթան եմ գաթան,

Ես ծերիցն եմ փախել:

Ամբարից աւելած,

Ես պառաւիցն եմ փախել:

Քունչերից քերած,

Ես նապաստակիցն եմ փախել:

Արածանով հունցած,

Ես պայլիցն եմ փախել:

Թորոնում թիսած,

Ես արջիցն եմ փախել:

Լուսամուտաւմը հունցած,

Քեղնից էլ աղուէս, դժուար

չէ փախել:

Օչ, ինչ հիանալի երգ է, ասաց աղուէսը, ըլմայլումեմ ձայնովդ հոփի ջան, բայց ի՞նչ անեմ ծերացել եմ: լաւ չեմ լսում: Թէ աստուած կրիբս՝ արի գունչիս վերայ նստիր՝ որ չըլիկ՝ մէկ անգամ էլ երգիր: Գաթան ուրախացաւ, վերից, որ իրան երգը գովում են. վերև թռաւ հեծաւ աղուէսի դունչը ու սկսեց երգի: «Ես գաթան եմ գաթան. բայց աղուէսը համի կերաւ նրան:

№ 15.

Այստեղ «ասորփ», հողիրի կարփն է զրած. բայց նա հող չէ, այլ հին ժամանակներից (ըլնութիւնից) թերակատրամ զուլշակի գործուածը, լանուածը, անկուածը, որ այստեղ շատ աղյարմարէ: Իսկ ոչոյն նշանակումէ սարդ, ու սարդի զործուածը, ասիլումէ սարդի սոսայն կամ սոսայն - սարդի ուցինա:

№ 16.

Այս № -ի խառն բառերում զրած է ոստայն, երկէ: ոչոյն բառի թարգմանութիւնը. բայց ոստայն նշանակումէ զուլշակի գործուածը, լանուածը, անկուածը, որ այստեղ շատ աղյարմարէ: Իսկ ոչոյն նշանակումէ սարդ, ու սարդի զործուածը, ասիլումէ սարդի սոսայն կամ սոսայն - սարդի ուցինա:

№ 17.

Մուկը, աքաղաղը արջը և եղը, յօդուածում սիալ և խորիթ է ասել, մուկը եղբայր, եղը եղբայր, այլ ամուկ եղբայր, եղ եղբայր: - Արջը մուկին պէտք է ասել. «Երկու չը լինիր, երեք լինիք, ինձ էլ «ոչ թէ» երկու չը լինիք երեք լինիք: «Բարի աջուղումն չէ ասլում, այլ բարի աջուղում: զրաբարի ու ումն, վերջաւորութիւնը աշխարհաբառում ու ումն, է զառել, այսինքն՝ ուն, տառը զեղչ չուկութիւնը:

Եյս տեղ թարգմանում ենք բայց թողած լուս և ձայնը յորուածը.

(Շուշանակէլէ)